

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. Հարությունյանին

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ

Հասմիկ Սարիբեկյանից

ք. Երևան, 055200483 hasmiksaribekyan@mail.ru


ԴԻՍՈՒՄ

Խնդրում եմ ինձ ընդգրկել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարին կից հասարակական խորհրդի կազմում:


Կից ներկայացնում եմ պահանջվող փաստաթղթերը.

1. դիմում՝ խորհրդի նախագահի անունով,
2. ամփոփ տեղեկանք՝ վերջին 2 տարում ծավալած
գործունեության վերաբերյալ,
3. հակիրճ վերլուծություն՝ վերջին 3 տարիների ընթացքում
նախարարության գործունեության և կրթության և
գիտության կամ մշակույթի կամ սպորտի և
երիտասարդության բնագավառներում իրականացվող
քաղաքականության վերաբերյալ:

Դիմող



Հ.Սարիբեկյան



Ամփոփ տեղեկանք կրթությանս և վերջին երկու տարում
ծավալած գործունեությանս վերաբերյալ

Հասմիկ Ռոբերտի Մարիբեկյան

1999-2004 Հայկական գյուղատնտեսական ակադեմիա
Տնտեսագիտության ֆակուլտետ «Մենդի արդյունաբերության
Ձեռնարկությունների կառավարում և կազմակերպում»
մասնագիտություն:

2009-2012 Երևանի Հյուսիսային համալսարան «Անգլերեն լեզու
և գրականության» մասնագիտություն:

Վերջին 2 տարիների ընթացքում մշտապես զբաղվել եմ
մանկավարժությամբ, դասավանդել եմ տարբեր զարգացման
կենտրոններում և վարել եմ Անգլերեն լեզվի դասընթացներ, ինչպես
նաև կատարել եմ թարգմանչական աշխատանք:

Ներկայում աշխատում եմ «Մոնավա » նախակրթական
հաստատությունում, որպես Անգլերեն լեզվի ուսուցչուհի և Արտ-
թերապևտ:

Վերջին 2 տարիների ընթացքում մասնակցել եմ բազմաթիվ
վերապատրաստումների, սեմինարների և գիտաժողովների, որոնք
կազմակերպված են եղել ինչպես տեղական

1. ԿՏԱԿ
2. Ginkgo language teaching center
3. Dasaran.am
4. lmdproc.am
5. Մոնտեսորի ասոցիացիա
6. Պարադիզմա
7. Ինֆուս ՀԿ

8. Երկուսով հոգեբանական կենտրոն
9. Կանա հոգեբանական կենտրոն
10. Լոգոս հոգեբանական կենտրոն
11. TMM հոգեբանական կենտրոն

այնպես էլ միջազգային՝

1. СТЕМФОРД Образовательная онлайн платформа
2. Финский Образовательный марафон
3. Future Learn

կազմակերպությունների և գիտահետազոտական հաստատությունների կողմից:

Հանդիսանում էմ նաև **eTwenning** միջազգային ուսուցչական համայնքի անդամ, PLB /նախագծային ուսուցման/ մասնագետ:

2019թ.ից Երևանի թիվ 110 դպրոց ՊԱՌԿ կառավարման խորհրդի անդամ:

Հակիրճ վերլուծություն

Վերջին երեք տարիների ընթացքում նախարարության գործունեության կրթության և գիտության, մշակույթի, սպորտի և երիտասարդության բնագավառներում իրականացվող քաղաքականության վերաբերյալ

Որպես ՀՀ քաղաքացի, մանկավարժ և երկու երեխաների մայր, դրական եմ վերաբերվում կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ոլորտում հետհեղափոխական ժամանակաշրջանում իրագործվող բարեփոխումներին, և համարում եմ, որ ժամանակակից և առաջադեմ կրթության հիմնաքարը հայ իրականության մեջ, այլևս, դրված է: Ուումնասիրելով և իմ դասավանդման մեջ կիրառելով նորարարական, աշակերտակենտրոն բազմաթիվ մեթոդներ եկել եմ այն համոզման , որ կրթության վեկտորները ճիշտ ուղղության վրա են, նշանակում է ամբողջությամբ կիսում եմ նախարարության մոտեցումները և պատրաստ եմ իմ գիտելիքները և փորձը ծառայեցնել ի նպաստ կրթության զարգացմանը:

Որպես օտար լեզվի /Անգլերեն լեզու և գրականություն/ ուսուցիչ, մեծապես ոգևորված եմ դպրոցներում նորարարական մոտեցումների ներդրման գաղափարներով: Հասկապես ոգեշնչող են նախագծային ուսուցման, STEAM ձևաչափի, ուսուցման պրոցեսում SS գործիքների ներդրման գաղափարները, ինչպես նաև Armath լաբորատորիաների մասսայականացումը ողջ հանրապետությունով մեկ: Վստահ եմ, որ այս հեղափոխական մոտեցումները դրականորեն կփոխեն աշակերտի վերաբերմունքը ուսուցման նկատմամբ: Դրական եմ գնահատում նաև նախարարության իրականացրած աշխատանքները դասագրքերի բովանդակային և ծավալային վերանայման հետ կապված հարցերում:

Մեծ հարգանքով եմ վերաբերվում նաև ներառական կրթության գաղափարին, և գնահատում եմ նախարարության ջանքերը ներառական կրթությունը ավելի լավը և հասանելի դարձնելու համար: Անգնահատելի է նաև ուսուցչի հեղինակության բարձրացմանը, աշխատավարձերի բարձրացմանը ուղղված նախարարության գործադրած ջանքերը: Մակայն դեռևս ակրնկալիքներս շատ մեծ են ուսուցիչների աշխատանքի ընդունման կարգի, վերապատրաստումների հետ կապված հարցերում, և լիահույս եմ, որ նախարարության բարեփոխումները կհաջողեն:

Որպես նախադպրոցական հաստատության մանկավարժ բարձր եմ գնահատում նախարարության մոտեցումները ոլորտը կարգավորելու հարցում և փաստում եմ, որ էլեկտրոնային հերթագրման համակարգը հաջողված քայլ էր մեր իրականության մեջ: Բարձր եմ գնահատում նաև նախարարության խրախուսող վերաբերմունքը նախադպրոցական կրթության ոլորտում նորարարական մոտեցումներ կիրառելու հարցի վերաբերյալ:

Հեղափոխական բարեփոխումներով ոգևորված, այնուամենայնիվ, կարծում եմ, որ դեռևս կան խնդիրներ, որոնք ունեն վերանայման, վերաձևակերպման կամ վերափոխման մեծ անհրաժեշտություն: Այդ հիմնարար հարցերի թվին եմ դասում հանրակրթական դպրոցների դասարաններում սովորողների թվաքանակի հետ կապված խնդիրները հատկապես օտար լեզվի դասաժամերին: Եթե հաշվի առնենք, որ պետությունը որդեգրել է SS ոլորտը զարգացնելու քաղաքականությունը, հետևապես պետք է ավելի մեծ ուշադրություն դարձնել դպրոցներում Անգլերեն լեզվի ուսուցման որակի բարձրացման վրա: Պետք է այն հնարավորինս կապել տեխնիկական գիտությունների հետ: Բացի այդ կարևոր եմ համարում նաև Անգլերեն լեզվի մասայական և հնարավորինս մատչելի դասավանդումը միջին տարիքի և մեծահասակների շրջանում, ինչը կընդլայնի վերամասնագիտանալու, զբաղվածություն սպահովելու և ինքնագարգացման հասնելու

հնարավորությունները: Սրանք հարցեր են, որոնց քննարկման համար պատրաստ եմ ունենալ իմ մասնակցությունը:

ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության դերը համարելով հիմնարար անհատի, և հետևապես, ազգի զարգացման գործում, կարևորում եմ այս օղակի ներդաշնակ աշխատանքը, և հետևապես ողջունում եմ ոլորտների կառավարման միավորման և համահավասար ֆինանսավորման գաղափարը:

Հասմիկ Սարիբեկյան

